«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Գայանե Խաչատրյան
«Ունիսոն» ՀԿ իրավաբանական բաժնի ղեկավար
ՀՀ փաստաբանների պալատի անդամ

Հաշմանդամությանն առնչվող հաճախակի տրվող հարցեր

Սույն հրապարակումն իրականացվել է
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստանի
աջակցությամբ

ԵՐԵՎԱՆ 2012

Հաշմանդամությանն առնչվող հաճախակի տրվող հարցեր

Հաշմանդամի կարգավիճակ

Հարց՝ Ինչպիսի՞ն է անձին հաշմանդամության խումբ սահմանելու կարգը։

Պատասխան՝ ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին օրենքի 62-րդ հոդվածի համաձայն ,բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամ է ճանաչում սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ ելնելով բժշկասոցիալական փորձաքննության արդյունքներից։

Հաշմանդամության պատճառ կարող է լինել՝

ա) մանկուց հիվանդությունը.

բ) ընդհանուր հիվանդությունը.

գ) աշխատանքային խեղումը կամ վնասվածքը.

դ) մասնագիտական հիվանդությունը.

ե) բնական, տեխնածին և այլ աղետները, ինչպես նաև դրանց վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

զ) Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի և այլ ճառագայթային աղետների վերացման աշխատանքների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

է) Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

ը) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

թ) զինվորական ծառայության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

ժ) զինվորական պարտականությունները կատարելիս ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը.

ժա) օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերը։

Սույն հոդվածում նշված համապատասխան պատճառական կապով որևիցե աստիճանի կենսագործունեության սահմանափակման հայտնաբերման դեպքում տվյալ անձը ճանաչվում է հաշմանդամ։

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ։

Հաշմանդամության խումբը կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ տվյալ աստիճանի կենսագործունեության սահմանափակման համար սահմանված ժամկետով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ։ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի սահմանման

չափորոշիչները բխում են երեխայի զարգացման և կառուցվածքային-գործառնական առանձնահատկություններից:

Օրենքով տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ վերականգնման ոչ ենթակա կենսագործունեության սահմանափակում ունեցող անձանց հաշմանդամության խմբերը սահմանվում են անժամկետ:

Հաշմանդամի վերափորձաքննությունը կատարվում է հաշմանդամության խմբի կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, նրա առողջական վիճակը վատթարանալու, նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության սահմանման կարգի խախտման դեպքերում, ինչպես նաև նրա (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն կամ դատարանի որոշմամբ:

Անժամկետ հաշմանդամ ճանաչված հաշմանդամի վերափորձաքննությունը կատարվում է նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու, նրա հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում, ինչպես նաև նրա (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն կամ դատարանի որոշմամբ:

Հարց՝ Ինչպե՞ս բողոքարկել հաշմանդամության խումբ սահմանելու (կամ չսահմանելու) մասին ԲՍՓՀ-ի որոշումը:

Պատասխան՝ .Համաձայն ՀՀ կառավարության Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին 2.03. 2006 թվականի N276-Ն որոշման՝ Անձն իր իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունի բողոքարկելու փորձաքննական որոշումները բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի գործողությունը կամ անգործությունը ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով:

Կրթություն

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամ երեխայի ծնողներն իրենք են որոշում, թե որ՝ հատուկ թե հանրակրթական (ներառական) դպրոց գնալու է երեխան:

Պատասխան՝ Համաձայն կրթության մասին ՀՀ օրենքի 19 հոդվածի՝

Պետությունն ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները՝ հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները:

Հարց՝ Ի՞նչ արտոնություններից են օգտվում հաշմանդամություն ունեցող դիմորդները:

Պատասխան՝ Համաձայն “ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքի 14 հոդվածի՝

Հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթությունն իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուսումնական հաստատություններում:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ ընդունելության քննությունների ընթացքում հաշմանդամների և մյուս դիմորդների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամները այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

Սակայն պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե 18 տարին լրանալուց հետո չեն ճանաչվել հաշմանդամ: Վճարովի համակարգ են տեղափոխվում նաև 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձինք, եթե ուսումնառության ընթացքում կատարված բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ճանաչվել հաշմանդամ:

Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձինք ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կամ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ:

Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամներին, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

Հարց՝ Արդյո՞ք մանկապարտեզի տնօրենն իրավունք ունի մերժել ընդունել երեխային՝ պատճառաբանելով, որ վերջինս հաշմանդամություն ունի:

Պատասխան՝ Համաձայն հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքի՝ Նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակության և անհրաժեշտ վերականգնողական օգնության համար առավել բարենպաստ

հնարավորություններ ստեղծելու նպատակով ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկներում նրանց համար ստեղծվում են հատուկ պայմաններ:

Այն հաշմանդամ երեխաների համար, որոնց առողջական վիճակը թույլ չի տալիս նրանց դաստիարակությունն իրականացնել ընդհանուր տիպի նախադպրոցական հիմնարկներում, ստեղծվում են հատուկ նախադպրոցական հիմնարկներ:

Ընդհանուր կամ հատուկ նախադպրոցական հիմնարկներում հաշմանդամ երեխաների դաստիարակության դեպքում, նրանց ծնողների համաձայնությամբ, այն կարող է իրականացվել տնային պայմաններում: Նման դեպքերում ծնողներից մեկին կամ նրան փոխարինող անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում են նյութական ապահովություն և արտոնություններ:

Համապատասխան կրթօջախները և նախադպրոցական հիմնարկները հաշմանդամ երեխաների ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց օգնություն են ցույց տալիս տնային պայմաններում նրանց դաստիարակությունն իրականացնելու գործում: Օգնության ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:

Հարց՝ Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամ երեխաների տնային ուսուցումը:

Պատասխան՝ Համաձայն Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝

Առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ ժամանակավորապես կամ մշտապես հաճախել չկարողացող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար կազմակերպվում է տնային ուսուցում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի, ուսումնական հաստատության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի և (կամ) նրա ծնողների (օրինական ներկայացուցիչների) միջև պայմանագրի հիման վրա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որի համաձայն՝

Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդություններն են՝

ա) հոգեկան խանգարումներ, վարքի խանգարումներ՝

շիզոֆրենիա, շիզոտիպային վիճակ և զառանցանքային խանգարումներ F20-F29 (կոդավորումը՝ ընտիվանդությունների միջազգային դասակարգման (10-րդ վերանայման)

տրամադրության խանգարումներ (F30-F39)

նյարդայնական և հոգեմարմնական խանգարումներ՝ կապված գերհույզի, սթրեսի հետ (F40-F48)

վարքային համախտանիշներ՝ կապված ֆիզիոլոգիական խանգարումների և ֆիզիկական գործոնների հետ (F50-F59)

մտավոր հետամնացություն (F70-F79)

հոգեբանական զարգացման խանգարում և լեզվի զարգացման յուրահատուկ խանգարումներ (F80-F89)

սովորաբար մանուկ կամ դեռահաս տարիքում սկսվող հուզական և վարքի խանգարումներ (F90- F98)

հոգեկան խանգարումներ՝ առանց լրացուցիչ ճշտումների (F99),

բ) նյարդային համակարգի հիվանդություններ

սիստեմային ատրոֆիաներ՝ գերազանցապես կենտրոնական նյարդային համակարգի ախտահարմամբ (G10-G13)

արտաբրգային և այլ շարժողական խանգարումներ (G20-G26)

նյարդային համակարգի այլ կազմափոխական հիվանդություններ (G31.0, G31.8, G31.9, G32, բացառությամբ G 31.1-ի)

կենտրոնական նյարդային համակարգի ապամիելինացնող հիվանդություններ (G35-G37)

էպիլեպսիա (G40)

նյարդամկանային սինապսի, առաջընթաց (պրոգրեսիվող) մկանային դիստրոֆիաներ) և այլ միոպաթիաներ (G70, G71, G72)

մանկական ուղեղային պարալիզ և այլ պարալիտիկ համախտանիշներ (G80-G83)

ողնուղեղի ախտահարումներ (բորբոքային) (G04-G06),

գ) բնածին շեղումներ (զարգացման արատներ, դեֆորմացիաներ և քրոմոսոմային խանգարումներ)՝

ողնուղեղային ճողվածք, ողնաշարի ճեղքվածք (spina bifida), բնածին արատներ (Q05)

ողնաշարի բնածին այլ անկանոնություններ (Q06)

նյարդային համակարգի բնածին այլ անոմալիաներ (Q07)

ոսկրամկանային համակարգի բնածին անկանոնություններ, զարգացման արատներ և ձևափոխումներ (Q65-Q79),

դ) այլ օրգան-համակարգերի խանգարումներ՝

ռևմատիզմ՝ ակտիվ փուլում՝ շարունակական ռեցիդիվող ընթացքով (I 00-I 01)

պանկարդիտ (I 51.8, I 05.8)

սրտի բնածին արատներ՝ սուբկոմպենսացիայի և դեկոմպենսացիայի փուլում (Q20-Q24)

քրոնիկ թոքաբորբ՝ տարածուն պրոցեսի և արտահայտված ինտոքսիկացիայի առկայության դեպքում (J84.1)

հաճախակի ծանր նոպաներով կամ երկարատև ասթմատիկ վիճակով ընթացող բրոնխիալ ասթմա (J46)

նեֆրոտիկ համախտանիշով քրոնիկ երիկամային անբավարարությամբ ուղեկցվող քրոնիկ նեֆրիտ (N 03, N 05, N 08, N 13, N 18-N 19)

մուկովիսցեդոզի ծանր ձևեր (E84.9)

քրոնիկ հեպատիտ և ասցիտի երևույթներով ընթացող լյարդի ցիրոզ (K74.6)

տարբեր օրգանների չարորակ նորագոյացություններ (C00-C99)

արյան մակարդելիության խանգարում՝ տեղաշարժման դժվարության առկայության դեպքերում (հեմոֆիլիայի ծանր ձև) (D66-D68):

Զբաղվածություն

Հարց՝ Ի՞նչ արտոնություններից են օգտվում հաշմանդամություն ունեցող աշխատողները:

Պատասխան՝ Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ Հաշմանդամություն ունեցող աշխատողները իրենց պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա, կարող են աշխատել ոչ լրիվ աշխատաժամանակով /141 հոդված/:

Հաշմանդամի ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքներում թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ և պայմանով, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ նրանց արգելված չեն /144 հոդված/:

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:

Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում: Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

Հարց՝ Ի՞նչ արտոնություններից են օգտվում հաշմանդամություն ունեցող աշխատողներ ունեցող գործատուները:

Պատասխան՝ ՀՀ Կառավարությունը 2006 թ-ի հուլիսի 13 թիվ 996 որոշմամբ սահմանել է աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման կարգը, չափը և պայմանները:

Որոշման նպատակը աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորմանն աջակցելն է՝ գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու միջոցով:

Անմրցունակ անձանց խմբին են պատկանում՝ զբաղվածության կենտրոններում հաշվառված՝

- հաշմանդամները
- ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերադարձած անձինք
- աշխատանքային տարիքի հասած առանց ծնողական խնամքի մնացած երեխաները և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո
- առնվազն երեսունհինգ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկներ
- երեք տարուց ավել գործազուրկի կարգավիճակում գտնվող անձինք
- փախստականները:

Յուրաքանչյուր անմրցունակ անձին աշխատանքի ընդունելու համար գործատուին տրվում է փոխհատուցում՝ գործատուի կողմից սահմանված աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափը ("Նվազագույն ամսական աշխատավարձի մասին" ՀՀ օրենք): Փոխհատուցման ծրագրում ընդգրկված անմրցունակ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների աշխատավարձերի փոխհատուցումը տրամադրվում է 2 տարի ժամկետով, իսկ անմրցունակ այլ անձանց՝ մեկ տարի ժամկետով: Անմրցունակ անձը փոխհատուցման ծրագրում կարող է ընդգրկվել մեկ անգամ:

Հարց՝ Ի՞նչ արտոնություններից են օգտվում հաշմանդամություն ունեցող անհատ ձեռներեցները:

Պատասխան՝ Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 984-Ն որոշմամբ սահմանված՝ “Ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման

համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցություն տրամադրելու” կարգի 16 հոդվածի՝

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար հաշմանդամություն ունեցող անձին անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն գրանցելու համար տրվում են ֆինանսական միջոցներ՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի վճարման նպատակով անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով, իսկ առևտրային կազմակերպություն գրանցվելու համար՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով.

բ) ֆիրմային անվանումը գրանցելու նպատակով պետական տուրքի վճարման համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով.

գ) կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի չափով:

Սոցիալական ապահովություն

Հարց՝ Ի՞նչ թոշակ են ստանում հաշմանդամները:

Պատասխան՝ Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի 8 -րդ հոդվածի համաձայն սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները.

1. աշխատանքային՝

1) տարիքային,
2) արտոնյալ պայմաններով,
3) երկարամյա ծառայության,
4) հաշմանդամության,
5) կերակրողին կորցնելու դեպքում,
6) մասնակի.

2. զինվորական՝

1) երկարամյա ծառայության,
2) հաշմանդամության,
3) կերակրողին կորցնելու դեպքում.

3. սոցիալական՝

1) ծերության,
2) հաշմանդամության,
3) կերակրողին կորցնելու դեպքում:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամներն ունեն ընտանեկան նպաստ («Փարոս») ստանալու իրավունքը:

Պատասխան՝ Նպաստ ստանալու իրավունք ունեն ընտանիքի կարիքավորության աստիճանի գնահատման «Փարոս» համակարգում հաշվառված այն ընտանիքները, որոնց կարիքավորության աստիճանը գնահատող միավորը բարձր է կարիքավորության սահմանային մեծության միավորից:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամին խնամող անձին պետությունը պարտավոր է վճարել:

Պատասխան՝ Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 38 հոդվածի՝ Խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարվում են անհատույց:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամին խնամող անձի խնամելու ժամկետը համարվում է աշխատանքային ստաժ:

Պատասխան՝ Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի 29 -րդ հոդվածի համաձայն՝ Հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի կամ որդեգրողի ապահովագրական ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, սակայն տասը տարուց ոչ ավելի: Հաշմանդամ երեխային կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է խնամակալ ճանաչված անձի ապահովագրական ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության խումբը և ժամանակահատվածը հաստատող, ինչպես նաև խնամակալ ճանաչված լինելու և խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի:

Առողջապահություն և վերականգնում

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամներն անվճար բուժման իրավունք ունեն:

Պատասխան՝ Այո, ՀՀ Կառավարության 04.03.2004թ. թիվ 318 որոշման 1-ին հավելվածով սահմանված է անվճար բուժօգնություն ստացող անձանց ցանկը՝

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՈՒ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ

(բացառությամբ այն բժշկական օգնության ու սպասարկման տեսակների և բժշկական ծառայությունների, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հետ)

Աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված 36.00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ

1-ին խմբի հաշմանդամներ
2-րդ խմբի հաշմանդամներ
3-րդ խմբի հաշմանդամներ
Հաշմանդամ երեխաներ (մինչև 18 տարեկան)
Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք
Միածնող երեխաներ (մինչև 18 տարեկան)
Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ (մինչև 18 տարեկան) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան)

Բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ

Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ

Բռնադատվածներ

Բժշկասոցիալական փորձաքննության իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվողներ

Հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաներ (մինչև 18 տարեկան) մինչև 7 տարեկան երեխաներ

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն, իսկ զորակոչային տարիքի անձանց՝ նաև հիվանդանոցային փորձաքննություն), ինչպես նաև խաղաղ ժամանակ վարժական հավաքների ու զորախաղերի կանչված զինապարտները՝ ամբուլատոր և հիվանդանոցային փորձաքննության մասով

Զինծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ

Ձերբակալվածներ, կալանավորված անձինք և ազատազրկման դատապարտվածներ

Մանկատներում և ծերանոցներում խնամվողներ

Մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաներ.

Մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան երեխաներ ու 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք (մասնագիտացված ստոմատոլոգիական բուժօգնության գծով).

Վերարտադրության տարիքի կանայք՝ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով)

Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամներն անվճար դեղորայք ստանալու իրավունք ունեն:

Պատասխան՝ ՀՀ Կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1717-Ն որոշմամբ սահմանված է անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկը, համաձայն որի՝

1. Բնակչության սոցիալական խմբեր, որոնց պատկանող անձանց հիվանդության դեպքում դեղերը տրվում են **անվճար՝**

ա) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ,

բ) հաշմանդամ երեխաներ (մինչև 18 տարեկան),

գ) հայրենական պատերազմի մասնակիցներ և նրանց հավասարեցված անձինք,

դ) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաներ (մինչև 18 տարեկան),

ե) բազմազավակ (մինչև 18 տարեկան չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ,

զ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ,

է) հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաներ (մինչև 18 տարեկան),

ը) մինչև 7 տարեկան երեխաներ:

2. Բնակչության սոցիալական խմբեր, որոնց պատկանող անձանց հիվանդության դեպքում դեղերը տրվում են **50 տոկոս զեղչով՝**

ա) 3-րդ խմբի հաշմանդամներ,

բ) Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ,

գ) բռնադատվածներ,

դ) միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ,

ե) միայն չաշխատող կենսաթոշակառուներից բաղկացած (այդ թվում՝ իրենց խնամքի տակ անչափահաս երեխա ունեցող) ընտանիքներ,

զ) միայնակ մայրերի երեխաներ (մինչև 18 տարեկան):

3. Չաշխատող կենսաթոշակառուներին դեղերը տրվում են 30 տոկոս զեղչով:

Նույն որոշմամբ սահմանվում է նաև այն հիվանդությունների ցանկը, որի առկայության դեպքում ամբուլատոր պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով դեղերը հիվանդներին տրվում են անվճար, դրանք են՝

Տուբերկուլյոզ (հակատուբերկուլյոզային դեղեր)

Հոգեկան հիվանդություններ (հոգեմետ դեղեր)

Չարորակ նորագոյացություններ (հակաուռուցքային դեղեր, ցավազրկող դեղեր, թմրադեղեր)

Շաքարային և ոչ շաքարային դիաբետ (հակադիաբետիկ դեղեր)

Էպիլեպսիա (հակացնցումային դեղեր)

Սրտամկանի ինֆարկտ (դուրսգրման օրվանից առաջին 2 ամիսը՝ արյան կորոնար շրջանառությունը բարելավող դեղեր)

Պարբերական հիվանդություն (կոլխիցին և (կամ) համարժեք այլ դեղեր)

Սրտի փականների արատներ (հակակոագուլյանտներ՝ պրոթեզավորումից հետո)

Մալարիա (հակամալարիային դեղեր)

Քրոնիկ երիկամային անբավարարություն (երիկամային փոխպատվաստման և (կամ) ծրագրային հեմոդիալիզի դեպքերում (ցիկլոսպորին, էրիթրոպոետին, մոֆետիլի միկոֆենոլատ և (կամ) դրանց համարժեք այլ դեղեր)

Ֆենիլկետոնուրիա (ֆենիլալանին չպարունակող մանկական կեր)

Հարց՝ Ինչպիսի՞ն է վերականգնողական սարքերի ստացման կարգը (խնդրում եմ նշել անվճար տրամադրվող վերականգնողական պարագաների ամբողջական ցանկը, տրամադրման հաճախականությունը և այլն):

Պատասխան՝ Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով և վերականգնողական պարագաներով ապահովումը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով /1993 թ./ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ-ի ապրիլի 12-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ-ի դեկտեմբերի 24-ի N 1780-Ն

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 453-Ն որոշմամբ: Պարագաները տրամադրվում են բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրված ուղեգրի հիման վրա:

Հաշմանդամներին պարագաներն առաջին անգամ տրամադրվում են հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագրին համապատասխան, իսկ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող (այսուհետ՝ սոցիալապես անապահով) անձանց, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների այրիներին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին, մինչև 18 տարեկան երեխաներին պարագաները տրամադրվում են անձի բնակության վայրն սպասարկող բժշկական կազմակերպության կողմից տրված գրավոր եզրակացության հիման վրա:

Սռորև ներկայացվում է համաձայն ՀՀ Կառավարության 12.04.2007 թ-ի N 453-Ն որոշմանը կից N 2 Հավելվածը, որով սահմանված է պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները՝

NN ը/կ	Անվանումները	Օգտագործման ժամկետը
1.	Պրոթեզներ	
1)	Ստորին վերջույթների պրոթեզներ	երեք տարի
2)	Վերին վերջույթների պրոթեզներ	չորս տարի
3)	Սրունքի օրթոպրոթեզ	երեք տարի
2.	Օրթեզներ	վեց ամիս-մեկ տարի
3.	Ապարատներ	երկու տարի
4.	Սեղմիրաններ	երկու տարի
5.	Աղեկապեր	մեկ տարի
6.	Կոշիկներ	
1)	Պրոթեզի, օրթեզի (տարեկան՝ երկու զույգ)	վեց ամիս
2)	Օրթոպեդիկ (տարեկան՝ երկու զույգ)	վեց ամիս
7.	Վերականգնման տեխնիկական միջոցներ	
1)	Ձեռնափայտեր՝ մեկ լրացուցիչ ռետինով	երկու տարի
2)	Հենակներ՝ մեկ լրացուցիչ ռետինով	երկու տարի
3)	Սուպինատորներ	մեկ տարի
4)	Կրծքագեղձի պրոթեզ և կրծկալ-ամրակ	մեկ տարի
5)	Լսողական սարքեր	երեք տարի
6)	Հաշմանդամի սայլակ	երեք տարի
7)	Փոքր տրամաչափի սայլակ	երկու տարի
8)	Քայլակներ	երեք տարի
8.	Աչքի պրոթեզ	երեխաների համար՝ մեկ տարի, մեծահասակների համար՝ երկու տարի
9.	Ձայնաստեղծ սարքեր	հինգ տարի

Այլ ոլորտներ

Հարց՝ Ի՞նչ արտոնություններ ունեն հաշմանդամները ժառանգության հետ կապված դեպքերում:

Պատասխան՝ Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194 հոդվածի՝

Պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի է առնվում այն ամենը, ինչ նման բաժնի իրավունք ունեցող ժառանգը որևէ հիմքով ստանում է ժառանգությունից՝ ներառյալ նման ժառանգի օգտին սահմանված կտակային հանձնարարության արժեքը:

Իսկ համաձայն նույն օրեմսգրքի 1220 հոդվածի՝

Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո: Ըստ օրենքի այլ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է հրավիրվում:

Հարց՝ Ի՞նչ արտոնություններ ունեն բանակում հաշմանդամ դարձած անձինք:

Պատասխան՝ Համաձայն "Զինծառայողների և նրանց ընտանիք անդամների սոցիալական ապահովության մասին" ՀՀ օրենքի՝

ա/ Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տարվա ընթացքում կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

բ/ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողները և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն:

Նույն օրենքով նախատեսվում է նաև ամենամսյա դրամական օգնության իրավունքը, որից օգտվում են հետևյալ անձիք՝

1) զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող՝

ա. Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,

գ. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները կամ այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները,

դ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակիցները,

ե. Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները,

զ. Մարտական խաչ շքանշանով պարգևատրված զինծառայողները,

է. Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները,

ը. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված շարքային զինծառայողների ընտանիքների անդամները.

2) զոհված զինծառայողների ընտանիքների այն անդամները, ովքեր ստանում են աշխատանքային կամ սոցիալական կենսաթոշակ և ունեն նաև կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք.

3) Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված

զինծառայողների ընտանիքների անդամները՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից անկախ:

Հաշմանդամ դարձած զինծառայողին գազի, ջրամատակարարման ծառայություններից և տրանսպորտից օգտվելու համար 2009թ. հունվարի 1-ից տրամադրվում է դրամական օգնություն՝ ամսական 9100 դրամի չափով: Ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին (ամուսնուն, ծնողներին, ինչպես նաև օրենքով սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքների անդամներին) տրամադրվում է դրամական օգնություն՝ ամսական 9100 դրամի չափով: Եթե ընտանիքի անդամների թիվը հինգից ավելի է, հինգից ավելի յուրաքանչյուր անձի համար լրացուցիչ տրվում է 3000 դրամ: Նշված անձինք օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

Հարց՝ Ի՞նչ արտոնություններ ունեն Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամները:

Պատասխան՝ Համաձայն Հայրենական Մեծ Պատերազմի վետերանների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ Վետերաններն իրավունք ունեն պետական պատվերի շրջանակներում ստանալ անվճար բժշկական օգնություն և բժշկական սպասարկում, ինչպես նաև արտոնյալ պայմաններով ստանալ առողջարանային բուժման ուղեգրեր՝ զինծառայողների համար օրենքով սահմանված կարգով:

Վետերաններին էլեկտրաէներգիայից և տրանսպորտից օգտվելու նպատակով, իսկ հաշմանդամվետերաններին՝ նաև գազի, ջրամատակարարման, ջրահեռացման և ջերմամատակարարման վարձերը վճարելու համար տրվում է ամենամսյա դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:

Հաշմանդամ վետերաններն իրավունք ունեն նաև՝

բ) 50 տոկոս զեղչով վճարել բնակարանի, աղբահանության, հեռախոսի և ռադիոյի վարձերը.

գ) ստանալ անվճար պրոթեզավորում և վերականգնողական պարագաներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Վետերանն ստանում է ամենամսյա պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Պատվովճարի գումարը հարկման ենթակա չէ և չի հաշվառվում վետերանների կամ նրանց ընտանիքների սոցիալական կարիքավորության աստիճանը որոշելիս:

Հարց՝ Ի՞նչ արտոնություններ ունեն Արցախյան ազատամարտում հաշմանդամ դարձած անձինք:

Պատասխան՝ Համաձայն Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոց. ապահովության մասին ՀՀ օրենքի՝ Զինծառայողները եւ նրանց ընտանիքների անդամներն ապահովվում են անվճար որակյալ բժշկական օգնությամբ, բնակարանային պայմանների բարելավման, քաղաքային տրանսպորտով անվճար երթևեկման և կոմունալ վարձելի դրամական փոխհատուցման արտոնություններից:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամություն ունեցող ծնողների զավակներն ունեն պարտադիր զինծառայությունից տարեկետման կամ բանակում ծառայելուց ազատման իրավունք:

Պատասխան՝ Համաձայն Զինապարտության մասին ՀՀ օրենքի՝

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն զորակոչիկին, որն ունի՝

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:

Անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,
- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը.
- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.

բ) առանց մոր մեծացող երեխա.

գ) երկու և ավելի երեխա.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

Զորակոչիկին տարկետում տրվում է նաև վերջինիս կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության դեպքում:

Եթե քաղաքացին մինչև զորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել են առնվազն 5 տարի առաջ, և կա սույն հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է նաև պաշտպանության նախարարը՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

Զորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկան դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը նա չի կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստազորում:

Հարց՝ Ես տեղաշարժվել չեմ կարող (անկողնային հիվանդ եմ): Ունեմ խնդիր, որը կարող է լուծել միայն նոտարը: Արդյո՞ք նոտարը պարտավոր է այցելել ինձ տանը կամ հիվանդանոցում: Եթե այո, արդյո՞ք դրա համար ես պետք է հավելյալ վճարեմ:

Պատասխան՝ Համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո նոտարը այցելում է տուն կամ հիվանդանոց:

Նոտարի կողմից իր գրասենյակից դուրս նոտարական գործողություններ կատարելու դեպքում կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափով. /տվյալ դեպքում, որպես նվազագույն աշխատավարձի չափ հաշվվում է 1000 դրամ/:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամության պատճառով կան վարորդական իրավունք տրամադրելու սահմանափակումներ

Պատասխան՝ Համաձայն ՀՀ Կառավարության թիվ 20.04.2006 թ. Թիվ 581-Ն որոշմամբ սահմանված է այն հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում արգելվում է վարել տրանսպորտային միջոց,

I. ԱՉՔԻ ԵՎ ԴՐԱ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տեսողության ֆունկցիան խախտող ծիածանաթաղանթի, եղջերաթաղանթի և աչքի այլ թաղանթների դեգեներատիվ բնույթի քրոնիկ հիվանդություններ, ցանցաթաղանթի շերտազատում, տեսողությանը խանգարող կամ ակնագնդի շարժումները խիստ սահմանափակող՝ կոպերի մկանների պարեզ (վիրահատությունից հետո դրական արդյունքի դեպքում տրվում է տրանսպորտային միջոց վարելու թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն):

2. Արցունքապարկի կոնսերվատիվ եղանակով չբուժվող քրոնիկ բորբոքում, արցունքապարկի խուղակ, չընդհատվող արցունքահոսություն (վիրահատությունից հետո դրական արդյունքի դեպքում տրվում է թույլտվություն)

3. Կայուն դիպլոպիա՝ շլության հետևանքով

4. Տեսողության սահմանափակում՝ ավելի քան 200 ցանկացած միջօրեականում: Բացարձակ կամ հարաբերական կենտրոնական սկոտոմա (սույն ցանկի 5-րդ կետի «ա» ենթակետում նշված ցուցանիշներից ոչ ցածր տվյալներ ունենալու դեպքում տրվում է թույլտվություն)

5. Տեսողության նվազում՝ կապված բեկող միջավայրերի կամ ակնահատակի կայուն փոփոխությունների, ռեֆրակցիայի անոմալիայի կամ այլ պատճառների (վնասվածք, օրգանական հիվանդություններ և այլն) հետ՝

ա) տեսողություն լավ աչքում՝ ուղղմամբ (կորեկցիա)՝ 0.8-ից ցածր, վատ աչքում՝ 0.4-ից ցածր: Տեսողության թույլատրելի ուղղումը կարճատեսության և հեռատեսության ժամանակ՝ 8, OD, այդ թվում՝ շփման տեսապակիներով (կոնտակտային լինզաներ) աստիգմատիզմի ժամանակ՝ 3, OD: Երկու աչքերի տեսապակիների տարբերությունը չպետք է գերազանցի 3, OD-ն,

բ) աչքի եղջերաթաղանթի ռեֆրակցիոն վիրահատություններից հետո (կերատոտոմիա, կերատոմիլյոզ, կերատոկոագուլյացիա, ռեֆրակցիոն կերատոպլաստիկա) վարումը թույլատրելի է վիրահատությունից 3 ամիս անց՝ սույն ցանկի 5-րդ կետի «ա» ենթակետում նշված ցուցանիշներից ոչ ցածր արդյունքի և աչքի առանցքի 21.5 - 27.0 մմ երկարության դեպքում,

գ) արհեստական ոսպնյակ՝ առնվազն մեկ աչքում: Ստաժավոր (10 տարվանից ավելի վարելու փորձ ունեցող) վարորդներին տրվում է թույլտվություն, եթե տեսողության ուղղումը թույլատրելիի սահմաններում է (սույն ցանկի 5-րդ կետի «ա» ենթակետ), և վիրահատությունից 6 ամիս անց բարդությունների բացակայության դեպքում

6. Գունազգայության խանգարումներ

7. Տեսողական նյարդի ապաճում (ատրոֆիա)

8. Գլաուկոմա (սկզբնական կոմպենսացված շրջանում սույն ցանկի 4-րդ և 5-րդ կետերի պահանջների պահպանման դեպքում ստաժավոր (10 տարի և ավելի վարելու փորձ ունեցող) վարորդներին տրվում է թույլտվություն՝ մեկ տարի անց կրկնակի փորձաքննություն անցնելու պայմանով):

III. ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օրգանների ֆունկցիաների խանգարում առաջացնող կամ գլխի, մարմնի և վերջույթների շարժումները խիստ սահմանափակող բարորակ նորագոյացություններ, պարանոցի շարժումների խիստ սահմանափակում, ոսկրերի, աճառների, մկանների, ջլերի ու հոդերի շարժումները խիստ սահմանափակող բնածին արատներ, խոշոր հոդերում կայուն ֆունկցիաների խանգարում առաջացնող փոփոխություններ, կեղծ հոդեր, ողնաշարի և կրծքավանդակի հիվանդություններ և ձևախախտումներ (դեֆորմացիաներ)՝ ողնաշարի և կրծքավանդակի օրգանների ֆունկցիաների խանգարմամբ, վնասվածքների և հիվանդությունների հետևանքներ՝ հենաշարժական ապարատի ֆունկցիաների խիստ խանգարմամբ

2. Վերին կամ ստորին վերջույթի, դաստակի կամ ոտնաթաթի բացակայություն, ինչպես նաև շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտում

3. Ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, որոնք հանգեցնում եմ վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման

4. Սիրտ-անոթային հիվանդություններ՝

ա) աորտայի անևրիզմա, գլխուղեղի անոթների անևրիզմա, ազդրային և ստորին ծնկային անոթների անևրիզմա (թույլտվությունը տրվում է մասնագիտացված բուժհաստատության կողմից՝ մեկ տարի անց կրկնակի փորձաքննություն անցնելու պայմանով),

բ) օբլիտերացիոն էնդարտերիտի II-III աստիճաններ, Տակայասուի հիվանդություն

5. Տարբեր ախտածնությամբ սրտի հիվանդություններ (էնդոկարդիտ, միոկարդիտ և այլն), ռիթմի խանգարումներ, սրտի քրոնիկ իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային շրջան (թույլտվության հարցը որոշվում է անհատական կարգով՝ հիմք ընդունելով մասնագիտացված բուժհաստատության եզրակացությունը):

IV. ՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քրոնիկ հոգեկան հիվանդություններ և դրանց հավասարեցված պարտադիր դիսպանսեր հսկողության ենթակա վիճակներ:

Էպիլեպսիա և նարկոլեպտիկ կամ կատալեպտիկ ցնցումներով ուղեկցվող հիվանդություններ, սինկոպալ երևույթներ

2. Քրոնիկ ալկոհոլիզմ, թմրամոլություն, տոքսիկոմանիա (թույլատրվում է վարել բուժվելուց և հսկողությունից հանվելուց հետո՝ անձի դեգրադացիայի և սոմատոնևրոլոգիական համախտանիշի բացակայության դեպքում)

3. Պերիֆերիկ նյարդային համակարգի քրոնիկ ռեցիդիվող հիվանդություններ և խոշոր նյարդային ցողունների հիվանդությունների և վնասվածքների մնացորդային երևույթներ՝ շարժումների, զգայունության և տրոֆիկայի զգալի խանգարումներով:

V. ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներզատական հիվանդություններ՝ ֆունկցիաների կայուն խանգարումներով (գիտակցության խանգարումների և կոմատոզ վիճակների հակվածության բացակայության դեպքում որոշումը կայացվում է անհատական կարգով՝ ներզատաբանի եզրակացության հիման վրա)

2. Արգանդի և հեշտոցի արտանկում, ռեկտովագինալ և միզապարկ-հեշտոցային խուղակներ (ուղիղ աղիքի սեղմամկանի (սֆինկտեր) ամբողջականության խանգարում) վիրահատական միջամտությունից հետո դրական արդյունքի դեպքում անհատական կարգով որոշվում է թույլտվության հարցը:

Միաժամանակ նույն որոշմամբ նախատեսվում է, որ՝

Մեկ վերին կամ միաժամանակ մեկ ստորին վերջույթի, դաստակի կամ ոտնաթաթի բացակայությունը չի կարող վարորդական իրավունք տալու հակացուցում հանդիսանալ:

Հարց՝ Փախստականի կարգավիճակ ունեցող հաշմանդամները օգտվո՞ւմ են արդյոք արտոնություններից

Պատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություններ, ժամանակավոր անաշխատունակության, արտադրությունում աշխատանքային խեղման, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի համար տրվող նպաստներ, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Հարց՝ ունե՞ն արդյոք հաշմանդամները քաղաքային տրանսպորտից օգտվելու արտոնություններ

Պատասխան՝ այո, բայց հաշմանդամները կարող են երթևեկել անվճար միայն քաղաքային էլեկտրական տրանսպորտով:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամության տեղեկանքում անաշխատունակության մասին նշումը պարտադիր է

Պատասխան՝ ՀՀ Կառավարության 2003 թվականի թիվ 780-Ն որոշմամբ սահմանված են հաշմանդամության խումբ նշանակելու չափորոշիչները, որի համար հիմք են հանդիսանում անձի կենսագործունեության սահմանափակումները, որի մեջ է մտնում նաև աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողությունը: Հիմնականում աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը համընկնում է ինքնասպասարկման ապահովման և ինքնուրույն տեղաշարժվելու կարողությունների սահմանափակման աստիճանների հետ, հետևաբար դա է պատճառը, որ հաշմանդամության խմբի հետ նշվում է նաև անձի անաշխատունակության կամ մասնակի անաշխատունակության մասին: Ներկայումս քննարկումներ են գնում չափորոշիչների փոփոխման վերաբերյալ, որի հետ միաժամանակ նախատեսվում է նաև վերանայել աշխատունակության վերաբերյալ նշումներ կատարելու հարցը:

Հարց՝ Հաշմանդամները օգտվո՞ւմ են արդյոք կոմունալ վճարումների արտոնություններից

Պատասխան՝ ոչ, նախկինում կոմունալ վճարների դիմաց ամսական դրամական փոխհատուցում էր վճարվում:

Հարց՝ Արդյո՞ք հաշմանդամներն անվճար սանատորակուրորտային բուժում ստանալու իրավունք ունեն:

Պատասխան՝ Համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 23.05.2011թ. N500-Ա հրամանի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հաշմանդամների, ինչպես նաև առանձին հիվանդություններով տառապող անձանց առողջարանային վերականգնողական բուժումն ապահովվում է պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատություններում («Ջերմուկ», «Արզնի» և «Գանձաղբյուր» առողջարաններ):

1) «Ջերմուկ» առողջարանում իրականացվում է հենաշարժական, ներզատաբանական, նյարդային, երիկամների և միզուղիների հիվանդություններով, ստամոքսաղիքային համակարգերի հիվանդություններով տառապող հաշմանդամների վերականգնողական բուժումը:

2) «Արզնի» և «Գանձաղբյուր» առողջարաններում իրականացվում է սիրտանոթային, շնչառական և ստամոքսաղիքային համակարգի հիվանդություններով տառապող հաշմանդամների վերականգնողական բուժումը:

Հիվանդներին վերականգնողական առողջարանային բուժման ուղեգրումն իրականացվում է Երևանի և ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի առողջապահական ծառայությունների միջոցով, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված բաշխացուցակ/ժամանակացույցի (բաշխումն իրականացվում է ըստ բնակչության թվերի հարաբերակցության)՝ հիմք ընդունելով ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության կողմից տրված բժշկական /Ձև 2-ը/ և սոցիալական կարգավիճակը հավաստող փաստաթղթերը:

Առողջարանային վերականգնողական բուժումը կազմակերպվում է հերթափոխային եղանակով, համաձայն առողջարանի տնօրինության կողմից ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացրած ժամանակացույցի:

Նույն հրամանով սահմանված է նաև առողջարանային բուժման բացարձակ հակացուցումները, որի դեպքում ուղեգիր չի տրվում՝

- Բոլոր հիվանդությունները սուր շրջանում
- Այն հիվանդությունները, որոնք պահանջում են հատուկ մասնագիտացված բուժում հիվանդանոցային պայմաններում
- Կրած ինֆեկցիոն հիվանդությունները, մինչև տվյալ հիվանդության համար սահմանված կարանտինային ժամկետի վերջը
- Բացիլակրությունը
- Աչքի, մաշկի վարակիչ հիվանդությունները, չարորակ անեմիան, լեյկեմիան, չարորակ նորագոյացությունները, կախեքսիան, ներքին օրգանների ամիլոիդոզը, թոքերի և այլ օրգանների ակտիվ տուբերկուլոզը
- Էպիլեպսիան՝ հաճախակի նոպաներով,
- Հոգեկան առողջության տարբեր խանգարումները
- Հիմնական հիվանդությունն ուղեկցող այնպիսի հիվանդությունները, որոնք հակացուցված են տվյալ առողջարանի բնակլիմայական պայմաններում բուժում ստանալու համար:

Հարց՝ Ինձ կարող են բուժել միայն արտասահմանում: Արդյո՞ք պետությունը պարտավոր չէ ֆինանսավորել իմ բուժումը համապատասխան արտասահմանյան հիվանդանոցում:

Պատասխան՝ Ոչ:

Հարց՝ ՀՀ-ն վավերացրել է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձան իրավունքների մասին կոնվենցիան: Արդյո՞ք ՀՀ-ում բնակվող հաշմանդամները իրավունք ունեն ՄԱԿ-ին բողոքել իրենց իրավունքների ոտնահարման դեպքում:

Պատասխան՝ Ոչ, քանի որ Հայաստանը դեռ չի վավերացրել Կոնվենցիային կից Կամընտիր արձանագրությունը: